Գիտություն

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ
№7-8
(389)
2024 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈԼՈՐՏՆԵՐ

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը և Չինաստանի Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանը խորացնում են համագործակցությունը

Սույն թվականի հուլիսի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հյուրընկալեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի պատվիրակությանը՝ համալսարանի նախագահ, պրոֆեսոր Շինչանգ Հանի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին և հանդիպման մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը նշեց. «Ձեր այցը մեծ հնարավորություն է՝ քննարկելու մեր երկրների գիտակրթական համագործակցության նոր ոլորտները»:

Ակադեմիկոս Սաղյանն անդրադարձավ 2020 թվականին՝ Covid-19 համավարակի ժամանակ, Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի միջև համագործակցությանը: «Մեր գործընկերները մասնագիտական աջակցություն ցուցաբերեցին վարակումը բացահայտող PCR (ՊՇՌ) թեստերի արտադրության կազմակերպման գործում: Իսկ 2023 թվականին Չինաստանի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր: Կա մեծ ներուժ՝ ընդլայնելու այս համագործակցությունը, մասնավորապես գենետիկական հիվանդությունների վաղ ախտորոշման և կանխարգելման համար գենետիկական ախտորոշիչ և սքրինինգային թեստերի, ինչպես նաև հիվանդությունների բուժման բջջային և գենային թերապիայի մոտեցումների մշակման գործում»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի նախագահ, պրոֆեսոր Շինչանգ Հանը ներկայացրեց համալսարանի գործունեությունը: Նա կարևորեց հայկական կողմի հետ համագործակցությունը և դրա զարգացումը:

Պատվիրակության կազմում էր համալսարանի Կենսաբժշկության քոլեջի Սուջոու Բիոբեյ կենսատեխնոլոգիական տեխնոպարկի ռեզիդենտ, «RocRock Biotechnology» ընկերության հիմնադիր-տնօրեն, պրոֆեսոր Շուշան Յինը, ով ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի կողմից ՊՇՌ թեստերի արտադրության տեղայնացման ընթացքում տրամադրել է մասնագիտական, տեխնիկական և լոգիստիկ օժանդակություն: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը պրոֆեսոր Շուշան Յինին իր ներդրման համար շնորհեց ՀՀ ԳԱԱ հոբելյանական մեդալ:

Պրոֆեսոր Յինը հանդես եկավ «Ախտորոշում և բուժում. աշխարհի համավարակից մինչև բջջի համավարակ» թեմայով դասախոսությամբ: Նա ներկայացրեց Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի հետազոտությունները և մշակումները՝ կապված նորագույն կենսատեխնոլոգիական մոտեցումների կիրառման հետ համավարակների կանխման և քաղցկեղի բուժման համար: «Մենք խոսում ենք գենետիկորեն մոդիֆիկացված իմունային բջիջների մասին, որոնք թույլ են տալիս հասնել շատ բարձր արդյունավետության քաղցկեղի տարբեր տեսակների բուժման ժամանակ»,- ասաց Շուշան Յինը:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը նշեց, որ Շանդոնգի 1-ին բժշկական համալսարանի հետ համագործակցությունը շարունակվելու է՝ ընդգրկելով քաղցկեղի և գենետիկ հիվանդությունների մոլեկուլային ախտորոշման և բուժման մեթոդների մշակման ոլորտները: «Մեր նպատակն է Հայաստանում ակտիվացնել այս ոլորտների հիմնարար և կիրառական հետազոտությունները՝ տեղայնացնելով այն գիտելիքն ու փորձը, որ ունեն Չինաստանի գործընկերներն այդ ոլորտներում»,- նշեց Արսեն Առաքելյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Հայաստան-Չինաստան մշակութային երկխոսություն» միջազգային գիտաժողովը

Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայաստան-Չինաստան մշակութային երկխոսություն» միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը՝ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի Կոնֆուցիոսի ինստիտուտի աջակցությամբ: Գիտաժողովին մասնակցեցին պետական, դիվանագիտական, գիտական և կրթական կառույցների ներկայացուցիչներ:

«Մշակութային երկխոսությունը քաղաքական, տնտեսական երկխոսության նախադուռն է, և այն կարևոր դեր կունենա, որպեսզի մեր երկու ժողովուրդների միջև ստեղծվեն ավելի կայուն տնտեսական, քաղաքական հարաբերություններ»,- ասաց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

Նա նշեց, որ հայ և չին ժողովուրդների միջև հարաբերությունները սկսվել են մ.թ. 2-րդ դարից: «Դրանք եղել են առևտրական հարաբերություններ, զբաղվել են մետաքսի առևտրով, իսկ միջպետական հարաբերությունները սկսվել են 1992 թ.: Այսօր Չինաստանի արտաքին քաղաքականությունը խաղաղասիրական է և միտված է դեպի ժողովուրդների մերձեցում: Մեր ժողովրդի, երկրի կարևոր խնդիրն է ակտիվացնել մեր հարաբերությունները Չինաստանի հետ, ամրապնդել և զարգացնել քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները: Կարծում եմ՝ այս գիտաժողովը կունենա շարունակություն և կնպաստի մեր երկու երկրների միջև բարեկամական կապերի ամրապնդմանը»,- ասաց ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ֆան Յունը: «Ուրախ եմ այս գիտաժողովի շրջանակում ներկա գտնվել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում: Հայաստանն ու Չինաստանն աշխարհի հնագույն քաղաքակրթություն ունեցող երկրներից են: Ավելի քան 2000 տարի առաջ Մետաքսի ճանապարհը խթանեց հայ-չինական կապերի զարգացումը: Հայ-չինական բարեկամությունը գալիս է դարերի խորքից, ջրի նման հավերժ է և այսօր էլ շարունակում է շատ ակտիվորեն զարգանալ: 2013 թ. Չինաստանի նախագահը հանդես եկավ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությամբ և այսպիսով կյանքի կոչեց Մետաքսի մեծ ճանապարհի ոգին, մեր օրերում խթանեց այս նախաձեռնությանը մասնակցող երկրների միջև համագործակցությունը՝ ներդնելով այդ գործում չինական իմաստություն: Հայաստանն այն երկրներից է, որն առաջին իսկ օրերից պատրաստակամություն է հայտնել աջակցելու նախաձեռնության զարգացմանը, և կողմերը ծավալել են փոխշահավետ համագործակցություն: Դա լուրջ արդյունքներ է գրանցել հատկապես կրթության ոլորտում՝ ամուր հիմքեր գցելով հայ-չինական ավանդական բարեկամության և տարատեսակ ոլորտներում առկա համագործակցության հետագա զարգացման համար»,- ասաց դեսպան Ֆան Յունը: Նա նշեց, որ Հայաստանում չինարենի դասավանդումը նոր թափ է առնում, և չինարենն ուսումնասիրելու համար ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվել հայ երիտասարդների համար:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Հարությունյանը նշեց՝ գիտաժողովը մեծապես պետք է նպաստի Հայաստան-Չինաստան մշակութային երկխոսության տարբեր հիմնահարցերի քննարկմանը: «Արևելագիտության ինստիտուտը մեծ աշխատանք է իրականացնում գիտական դիվանագիտության ուղղությամբ, և պատահական չէ, որ մշակութային դիվանագիտությունը գիտական դիվանագիտության կարևոր ուղղություններից է, որը միտված է տարբեր երկրների հասարակությունների ընկալմանը և նրանց միջև փոխգործակցության մշակմանը»,- ասաց Լիլիթ Հարությունյանը:

«Ուրախ եմ այցելել աշխարհի հնագույն մայրաքաղաքներից մեկը և մասնակցել այս գիտաժողովին: Մեր ավանդական բարեկամությունը գալիս է դարերի խորքից և հատկապես դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո՝ վերջին 32 տարվա ընթացքում, մենք դարձել ենք փոխվստահություն ներշնչող լավ ընկերներ և անկեղծ համագործակցություն իրականացնող լավ գործընկերներ»,- ասաց Չինաստանի Կրթության նախարարության Լեզվի կրթության և համագործակցության կենտրոնի կուսկոմի քարտուղարի տեղակալ Յու Թիենցին: Նա նշեց, որ Հայաստանում մեծանում է հետաքրքրությունը չինարենի նկատմամբ: «Լեզուն մարդկային քաղաքակրթության կրողն է և ցանկացած երկիր ճանաչելու լավագույն բանալին: Վերջերս հիմնադրվել է չինարեն դասավանդող ուսուցիչների միություն, որը մեծ ներդրում է ունենալու համագործակցության գործում»,- հավելեց Յու Թիենցին:

ՀՀ արտաքին գործերի նախարարության Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների վարչության Հյուսիսարևելյան Ասիայի բաժնի պետ Սարգիս Շիրխանյանը նշեց՝ Հայաստանի և Չինաստանի միջև հարաբերությունների, դրանց պատմության, ընդհանուր ձեռքբերումների, մարտահրավերների հաղթահարման շուրջ վերլուծությունները շատ կարևոր են դիվանագետների համար: «Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից են»,- շեշտեց Սարգիս Շիրխանյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին Չինաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գևորգյանը և Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի Կոնֆուցիոսի ինստիտուտի հայկական կողմի տնօրեն Գոռ Սարգսյանը:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին զեկուցումներ՝ նվիրված ՀՀ բուհերում չինարենի և Չինաստանի մշակույթի հետազոտություններին, Հայաստանի դպրոցներում չինարենի դասավանդմանը, Հայաստան-Չինաստան մշակութային ծրագրերի փոխանակման նշանակությանը տնտեսական համագործակցության համատեքստում, հայ-չինական հարաբերություններում գիտական դիվանագիտության դերին, հանրային դիվանագիտության մեջ լեզվի նշանակությանը, ինչպես նաև հայ-չինական բարեկամության դպրոցի դերին:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Առաջարկություններ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման վերաբերյալ

ՀՀ ԳԱԱ կենսաբազմազանության և կենսաանվտանգության պրոբլեմային խորհուրդը, հիմք ընդունելով սույն թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած նիստի քննարկումների արդյունքները, պետական ոլորտային կառույցներին է ներկայացրել Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:

Այն ուղարկվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին, ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Մնացականյանին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Վահագն Գևորգյանին:

ՀՀ ԳԱԱ կենսաբազմազանության և կենսաանվտանգության պրոբլեմային խորհրդի առաջարկությունները.

1. Սահմանափակել ջրառը Սևանա լճից ՀՀ կառավարության կողմից սահմանված քանակով: Արագացնել ջրամբարների կառուցումը՝ ջրառը կարգավորելու համար:

2. Միջոցներ ձեռնարկել ոռոգման ջրի կորուստը կրճատելու համար:

3. Կրճատել կամ կանխել ջրահավաք ավազանի բնակավայրերի կոմունալ-կենցաղային արտանետումների միջոցով կենսածին նյութերի ներթափանցումը լիճ, որը հնարավոր է իրականացնել կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանների կառուցմամբ և շահագործմամբ առնվազն խոշոր բնակավայրերում:

4. Սահմանափակել հանգստյան գոտիներից կենսածին նյութերի ներթափանցումը լիճ՝ խիստ հսկողություն սահմանելով վերոնշյալ աղբյուրներից արտանետումների նկատմամբ:

5. Աստիճանաբար նվազեցնել հատակային նստվածքներից կենսածին նյութերի ջրային միջավայր անցումը՝ ապահովելով ջրի մակարդակի կայուն բարձրացում և հիպոլիմնիոնային պաշտպանիչ շերտի վերականգնում:

6. Աջակցել հէկերի ուսումնասիրություններին. փոքր հէկերը, համարվելով էկոլոգիապես մաքուր, կարող են տեղային մակարդակով վնաս հասցնել: Կառուցված լինելով ձկների ձվադրավայր հանդիսացող գետի վրա՝ փոքր հէկը նպաստում է այդ շրջանում ջրի ջերմաստիճանի բարձրացմանը, հոսքի արագացմանը, ինչը խաթարում է և՛ ձվադրման գործընթացը, և՛ ձկների կերային բազան:

7. Կանխել կամ նվազեցնել ներլճային կենսաբանական գործընթացները, մասնավորապես սննդային շղթայի խախտմամբ պայմանավորված աղտոտումները՝ վերականգնելով խեցգետնային և ձկնային պաշարները:

8. Արգելել օտար ձկնատեսակների բուծումը Սևանա լճի ավազանում:

9. Խստացնել որսի թույլտվության պայմանները, քանի որ ոչ կանոնավոր որսի պատճառով արդյունագործական նշանակության սիգը և հատկապես խեցգետինը պակասել են:

10. Կազմել Սևանա լճի հետագա զարգացման ռազմավարություն, որում պետք է գիտականորեն հիմնավորված լինի տարբեր ուղղությունների հարաբերակցությունը՝ Սևանա լիճը՝ որպես յուրօրինակ քաղցրահամ ջրի աղբյուր, ռեկրեացիոն գոտի և ձկնարդյունաբերության վայր:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառում

Վերջերս ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցան Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տարեվերջյան համերգը և Կերպարվեստի բաժնի ցուցահանդեսը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 80-ամյակին:

«Հուզված եմ և հիացած: Հուզված եմ, որ մեր ինստիտուտի ծննդյան կապակցությամբ երեխաների կատարմամբ այսպիսի թանկ նվեր ստացանք: Հիացած եմ դպրոցի սաների կատարողական բարձր մակարդակով, տարբեր դարաշրջանների, տարբեր երկրների կոմպոզիտորների, տարբեր ոճերի ստեղծագործությունների պրոֆեսիոնալ մեկնաբանմամբ: Այս համերգը երկար կմնա մեր սաների հիշողության մեջ, քանի որ նրանք առաջին ու միակ դպրոցականներն են, ովքեր ելույթ ունեցան Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի այս եզակի դահլիճում»,- ասաց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը:

«Այսօր շատ պատվավոր օր է մեր դպրոցի համար, բոլորիս համար, որովհետև պատիվ ունենք Գիտությունների ազգային ակադեմիայի պատերի ներքո ներկայացնելու այն, ինչ արել ենք անցած մեկ տարվա ընթացքում: Ուզում եմ շնորհակալություն հայտնել այս հնարավորության համար ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանին, ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ Գարեգին Սնգրյանին և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանին: Շնորհակալություն Երևանի քաղաքապետարանին և Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմին, որ դպրոցը հագեցած է անհրաժեշտ պարագաներով և գտնվում է իրենց ուշադրության կենտրոնում»,- իր ելույթում ասաց ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն Էդգար Գյանջումյանը:

Արվեստի ինստիտուտը որպես այդպիսին գործում է 1958 թվականից, սակայն նրա հիմքում ՀԽՍՀ ԳԱ կազմում 1944 թվականին ստեղծված Երաժշտության պատմության և տեսության (1948-1958 թթ.՝ Արվեստների պատմության ու տեսության) սեկտորն է, որը 1944-1948 թվականներին ղեկավարել է կոմպոզիտոր, երաժիշտ-տեսաբան, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Քրիստափոր Քուշնարյանը՝ դառնալով Հայաստանում ակադեմիական երաժշտագիտության հիմնադիրը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Բոլոնիայի համալսարանի պրոֆեսորի զեկուցումը ՀՀ ԳԱԱ-ում

Ս/թ. հուլիսի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հյուրընկալեց Իտալիայի Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Ալեսանդրո Կիարուչիի գլխավորած բուսաբանների պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ գիտական և կրթական կառույցների ներկայացուցիչներ, երիտասարդ գիտնականներ, ուսանողներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը: Նա կարևորեց Բոլոնիայի համալսարանի ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի համագործակցությունը և նշեց, որ Ալեսանդրո Կիարուչին Իտալիայի ամենահայտնի բուսաբաններից է: Ալեսանդրո Կիարուչին եղել է Իտալիայի բուսաբանական միության նախագահը, Բոլոնիայի համալսարանի Կենսաբանական, երկրաբանական և բնապահպանական գիտությունների բաժնի ղեկավարը, Բոլոնիայի բուսաբանական այգու գիտական տնօրենը:

Պրոֆեսոր Կիարուչին հանդես եկավ «Կենսաբազմազանության պահպանության մարտահրավերներն Անտրոպոցենում» զեկուցմամբ: Նա ներկայացրեց կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրները: Այնուհետև քննարկվեցին կենսաբազմազանության վրա մարդու գործունեության հետևանքները, աճելավայրերի կորուստը և մասնատումը, կլիմայի փոփոխության ազդեցությունն էկոհամակարգերի վրա, տեսակային կազմի փոփոխությունները ժամանակի և տարածության մեջ: Նշվեց կենսաբազմազանության մարտահրավերներին անդրադառնալու հրատապությունն ազգային և միջազգային մակարդակում, կենսաբազմազանության արդյունավետ պահպանության երկարաժամկետ պլանավորման կարևորությունն էկոլոգիական հավասարակշռության ապահովման և մարդու բարեկեցության համար:

Պրոֆեսոր Կիարուչին Հայաստան է ժամանել Իտալիայի ազգային հետազոտությունների խորհրդի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող և ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի կողմից իրականացվող «Հայաստանում երկրաբազմազանության և կենսաբազմազանության փոխազդեցությունն անտառային և տափաստանային բնակմիջավայրերում էկոկլիմայական գրադիենտի երկայնքով. գլոբալ տաքացման հետևանքների համար կիրառվող տեսական հայեցակարգ» հայ-իտալական ծրագրի շրջանակում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ ԲԱՔՎԻ ԴԱՏԱՐԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՄԱՍԻՆ

Արցախյան հարցում մեզանում շրջանառվում են երկու իրարամերժ տեսակետներ: Առաջինի համաձայն՝ Արցախը և այսպես կոչված անկլավները միջազգային իրավունքով չեն պատկանում Ադրբեջանի Հանրապետությանը (Ադր.Հ): Ըստ երկրորդ տեսակետի՝ դրանք Ադր.Հ-ի օրինական մաս են: Երևույթը փաստում է, որ այդ հարցում մենք չունենք միասնական հստակ հայեցակարգ: Երկու իրարամերժ դրույթներ միաժամանակ ճշմարիտ լինել չեն կարող: Պահանջվում է գնահատել փոխբացառող այդ դրույթների հիմնավորումները: Առաջին տեսակետը նախ նշում է Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի՝ 1921 թ. հուլիսի 5-ի չընդունված, բայց գործադրված ապօրինի որոշումը, որով արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Լեռնային Ղարաբաղը բռնությամբ օտարվել է նրանից և հանձնվել Խորհրդային Ադրբեջանին/Ադր. ԽՍՀ-ին: Այնուհետև այն հենվում է ԽՍՀՄ՝ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքին, որը միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումներին արտոնում էր ինքնուրույն լուծել իրենց կարգավիճակի հարցը՝ ընդհուպ մինչև սուվերեն պետության հաստատումը: Այդ հիմքերով մենք պնդել ենք, որ 1991 թ. ԽՍՀՄ լուծարման ընթացքում ԼՂԻՄ-ը և հարակից Շահումյանի շրջանն օրինաբար դուրս են եկել Խորհրդային Ադրբեջանի կազմից և 1991 թ. դեկտեմբերի 10-ին ԽՍՀՄ նշված օրենքով և ազգերի ազատ ինքնորոշման իրավունքով հռչակել ԼՂՀ-ն:

Իրավական փաստարկը կաշխատեր անվրեպ, եթե խնդիրը մնար ԽՍՀՄ՝ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի համատեքստում: Բայց Բաքուն փոխեց իրավական թեման և Ադր.Հ-ի անկախացումը 1991 թ. օգոստոսի 30-ի հռչակագրով ներկայացրեց ոչ թե ԽՍՀՄ-ից դուրս գալու, այլ 1918-1920 թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) վերականգնելու ակտ: Ինչ վերաբերում է Խորհրդային Ադրբեջանին, ապա 1991 թ. հոկտեմբերի 18-ի՝ Ադր.Հ-ի անկախության մասին Սահմանադրական ակտով Բաքուն ընդհանրապես հրաժարվեց նրանից՝ այն հայտարարելով 1920 թ. ապրիլին Խորհրդային Ռուսաստանի կողմից Անդրկովկասի օկուպացված տարածքներում հիմնված ապօրինի կազմավորում:

ԼՂՀ Անկախության հռչակագիրն այդ փաստն արձանագրել է ԼՂՀ կայացման լեգիտիմությունը հաստատող իրավական փաստարկների շարքում: Արձանագրել ու, ցավոք, անտեսել ենք: Բաքուն անվավեր հայտարարեց ԽՍՀՄ կազմավորման դաշնագիրը իրեն վերաբերող մասով, մերժեց Ադր. ԽՍՀ-ի՝ որպես ապօրինի կազմավորման ժառանգությունը, իսկ մենք Ադր. ԽՍՀ-ին օրինականություն էինք վերագրում՝ պայքարելով, որ ճանաչվի նրա կազմից ԼՂԻՄ-ի դուրս գալու օրինականությունը: Մենք չդիմեցինք ԼՂՀ լեգիտիմության ավելի հզոր իրավական հիմքերի, որ մեզ տրամադրել էր Բաքուն ԱԴՀ պետականության վերականգնման և իրեն նրա իրավահաջորդ հռչակելու ակտով: Չանդրադարձանք Բաքվի՝ այդ ակտից բխող տարածքային ապօրինի պահանջատիրությանը, երբ հենց այդտեղ էր իրավական վճռական այն փաստարկը, որն ամենից հզորն էր մեզ համար:

Բանն այն է, որ ԱԴՀ-ն, որի իրավահաջորդն է իրեն հայտարարել մերօրյա Ադր.Հ-ն, չի ունեցել ճանաչված տարածքներ ու սահմաններ: Ազգերի Լիգան, որը մերժել է ԱԴՀ-ին ընդունել իր շարքերը, փաստել է դա՝ արձանագրելով, որ «դժվար է որոշել այն տարածքների չափերը, որոնցում այդ պետության կառավարությունն իրագործում է իր իշխանությունը»: Կարևոր մի դիտարկում: Եթե Լիգան նույնիսկ շատ ցանկանար, ԱԴՀ-ի համար տարածքներ ու սահմաններ չէր կարող գտնել, քանի որ այն իրեն հռչակել էր պետական սահմանների որոշման համար իրավունքի տեսակետից անհիմաստ բանաձևով՝ ամրագրելով, որ ինքը կայացել է «Արևելյան ու Հարավային Անդրկովկասում»: Աշխարհագրական ու ժողովրդագրական որոշակիությունից զուրկ այդ հռչակագիրն ընդունել է Ադրբեջանի մուսուլմանների ազգային խորհուրդ անունով մի մարմին, որի ինքնությունը նույնպես հնարավոր չէ հստակեցնել, քանզի մուսուլմանների ազգային խորհուրդ բառակապակցությունն իսլամի տեսակետից անհիմաստ է: Փորձելով շտկել իրավահաջորդության գործը՝ Բաքուն 1991 թ. հոկտեմբերի 18-ին ընդունած անկախության մասին Սահմանադրական ակտում հետին թվով փոխել է ԱԴՀ-ն հռչակած մարմնի անունը՝ այն անվանելով Ադրբեջանի ազգային խորհուրդ: Սակայն այդ բառակապակցությունը 1918 թ. Ադրբեջանին չէր վերաբերի, քանի որ այդ անվամբ հանրություն այն ժամանակ չի եղել (ադրբեջանցին այսօր էլ վիճակագրական, այլ ոչ թե էթնիկական անվանում է): Բայց Բաքուն ավելի կարևոր խնդիր ուներ: Պետք էր ինչ-որ կերպ լուծել տարածքների հարցը, որը ԱԴՀ-ի մոտ բաց էր մնացել: «Արևելյան և Հարավային Անդրկովկաս» անհիմաստ ճանաչված բանաձևը կրկնել չէր կարելի: Նոր բանաձև էր պետք: Ադր.Հ-ի անկախության մասին Սահմանադրական ակտում Բաքուն դա գտավ՝ 14-րդ հոդվածում արձանագրելով՝ «Պատմականորեն ձևավորված սահմաններում Ադրբեջանական Հանրապետության տարածքը միասնական, անբաժանելի ու անօտարելի է»: ԱԴՀ հռչակագրի՝ Արևելյան ու Հարավային Անդրկովկասի մասին անհեթեթ բանաձևը Սահմանադրական ակտը փոխարինեց իրավունքի տեսակետից ավելի անհիմաստ բանաձևով՝ պատմականորեն ձևավորված սահմաններ հասկացությամբ:

Իրավական ու տարածքային ինքնությունից զուրկ այսպիսի Ադր.Հ է 1991 թ. դեկտեմբերի 21-ին ներկայացել Ալմա Աթա: Թվում էր, թե այն օրինական սահմաններ ձեռք կբերի Ալմա Աթայից հետո՝ դեկտեմբերի 29-ին, հապճեպ արված հանրաքվեով: Բայց նա նաև այդպես ձեռք չբերեց հռչակված տարածքներ ու սահմաններ: Դա թույլ չէր տալիս այն հարցը, որը հանրաքվեով դրված էր քվեարկության՝ «Սատարու՞մ եք Դուք Ադրբեջանական Հանրապետության Գերագույն խորհրդի «Ադրբեջանական Հանրապետության անկախության մասին» Սահմանադրական ակտը»: Սակայն այդ ակտում, ինչպես նշվեց, տարածքների մասին գրված է իրավունքի տեսակետից անհեթեթ դրույթ՝ «պատմականորեն ձևավորված» բառակապակցությամբ:

Ինչու՞ է Բաքուն անհեթեթ մի բանաձևից անցնում ավելի անհեթեթ բանաձևի: Պատճառը պարզ է. եթե օրինական հիմքեր ունենար, դրանց կդիմեր: Չունի:

Երկու հավելյալ դիտարկում: Առաջին. 1991 թ. դեկտեմբերի 29-ին Բաքվի կազմակերպած հանրաքվեին ԼՂՀ-ն չի մասնակցել, քանի որ նա միջազգային դիտորդների ներկայությամբ հանրաքվեով արդեն ձեռք էր բերել անկախություն: Երկրորդ. Եվրոպական միությունը վերը բերված բոլոր փաստերն անտեսել է: Անտեսել է նաև, որ Ադր.Հ-ն չի բավարարում իր կողմից 1991 թ. դեկտեմբերի 16-ին առաջադրված չափանիշներից և ոչ մեկին, որոնց պետք է բավարարեին հետխորհրդային տարածքի նորանկախ պետությունները: Այսօր էլ հայտնի չէ, թե ինչ է հասկանում ԵՄ-ը Ադր.Հ-ի սահմանների անձեռնմխելիություն հասկացության տակ, երբ այդ տարածքներն ու սահմանները Բաքուն չի հռչակել երբևիցե:

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի անդրադարձը հայ-թուրքական ներկայիս հարաբերություններին

(հատվածներ Zarkerak.am-ին տված հարցազրույցից)

Թուրքիայի գործողությունների մեջ փոփոխություններ չկան, ինչպես սահմանը փակ է, այնպես էլ մնում է փակ, ինչպես Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չի հաստատել, այնպես էլ չի հաստատում, Հայաստանի կողմից գործողություններ կան, ինչպես գիտենք, անցակետն արդեն պատրաստվել է: Հռետորաբանության առումով որոշակի տեղաշարժ ես տեսնում եմ, մասնավորապես Թուրքիայի կողմից կարծես թե սկսում են Հայաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ ավելի կառուցողական խոսել:

Մի քանի հանգամանք է ազդել Թուրքիայի հռետորաբանության փոփոխության վրա. մի կողմից այն է, որ ինչպես հայտարարում են և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը, խաղաղության պայմանագրի կնքման առումով գործընթացը բավականին առաջ է գնացել, խոչընդոտները պակասել են, իսկ Թուրքիան պաշտոնապես ամենատարբեր մակարդակներով հայտարարել է, որ Հայաստանի հետ հարաբերությունները կկարգավորվեն այն բանից հետո, երբ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագիրը ստորագրվի: Հիմա Թուրքիան դրական է գնահատում այդ գործընթացը, դրա համար էլ որոշ չափով հռետորաբանությունը դրական առումով փոխվել է: Մյուս կողմից ես տեսնում եմ նաև հետևյալ միտումը, որ Թուրքիան Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները ավելի է սերտացնում, իհարկե, Թուրքիան եղել է, կա և ապագայում կմնա ԱՄՆ-ի դաշնակիցը, բայց հիմա կարծես թե ավելի է հայտնվում Արևմուտքի և ԱՄՆ-ի ընդհանուր ռազմավարության և քաղաքականության ուղեծրում, և ուժեղանում է ԱՄՆ-ի ազդեցությունը Թուրքիայի քաղաքականության վրա: Ինչպես հայտնի է, և՛ ԱՄՆ-ը, և՛ ԵՄ-ը միշտ էլ կողմ են եղել, որ հայ-թուրքական հարաբերությունները կարգավորվեն, այնպես որ ես սա դիտարկում եմ որպես երկրորդ գործոն, որը նպաստում է Թուրքիայի կողմից այս հռետորաբանությունն ավելի կառուցողական դարձնելուն: Թուրքիան փորձում է ԱՄՆ-ին ցույց տալ, որ ինքը պատրաստ է Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու:

Թուրքիայի ղեկավարը հայտարարել է, որ ոչ մի քայլ ընդառաջ չի լինի Հայաստանի հետ հարաբերություններում, մինչև պայմանագիրը չստորագրվի, այսինքն, եթե հիմա Թուրքիան որևէ քայլ անի, պետք է կա՛մ էրդողանը հրապարակայնորեն իր մոտեցումը փոխի, կա՛մ էլ ուղղակի անտեսվի այդ հայտարարությունը, երկուսն էլ անհավանական եմ համարում, այնպես որ, կարծում եմ, որ դեռևս ներկա փուլում սկզբունքային փոփոխություններ Թուրքիայի դիրքորոշման մեջ չեն լինի, իրական քայլեր չեն լինի: Եթե էրդողանը նման հայտարարություն չաներ, գուցե ինչ-որ քայլեր լինեին:

Թուրքիայի համար դեռևս սկզբունքային է մնում այն հարցը, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը հնարավոր է միայն հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումից հետո: Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքվող խաղաղության պայմանագիրն անհրաժեշտ է ոչ միայն Թուրքիային, այլև ԱՄՆ-ին:

Վերջերս ամերիկյան պաշտոնատար անձանցից հայտարարություններ ենք լսում այն մասին, որ Հարավային Կովկասը պետք է դառնա կարևոր ճանապարհ, որը կապահովի Չինաստանի և Եվրոպայի առևտրական ճանապարհը՝ շրջանցելով և՛ Ռուսաստանը, և՛ Իրանը: Սա մոտակա տարիներին դառնալու է շատ ավելի կարևոր մի նախագիծ, որ Հարավային Կովկասը ներգրավվի համաշխարհային գործընթացների մեջ, ինչին կարող է նպաստել հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը: Հաշվի առնելով նաև դա՝ Թուրքիան էլ է շահագրգռված, որ դա տեղի ունենա, որովհետև Թուրքիայի դերն է այդտեղ բարձրանում: Բայց նաև Թուրքիայի համար կարևոր է խաղաղության պայմանագիրն այն առումով, որ այդպիսով թղթին կհանձնվեն, ինչպես իրենք են ենթադրում, վերջին արցախյան պատերազմի արդյունքները:

«Զանգեզուրի միջանցք»-ի հարցը դեռևս Թուրքիայի օրակարգում է: Հիմա, իհարկե, քիչ է խոսվում դրա մասին, բայց իրականությունը չի փոխվում: Խնդիրն այն է, որ Թուրքիայում դեռևս կառուցված չէ երկաթգծի այն հատվածը, որը պետք է թուրքական երկաթգծերի համակարգը, օրինակ՝ Կարսը կապի Նախիջևանի հետ, անցյալ տարի աշնանն Ադրբեջանի հետ ստորագրվեց համաձայնագիր, և հիմա Ադրբեջանի ֆինանսավորմամբ սկսվել են շինարարական աշխատանքները, իմ կարծիքով երկու-երեք տարի կտևի: Միևնույնն է, «Զանգեզուրի միջանցք» ասվածը մնում է պրոյեկտ, այնպես որ կարծում եմ՝ ներկա փուլում Թուրքիայի համար կարևոր է հենց խաղաղության պայմանագիրը, իսկ միջանցքի խնդիրը կարող է հաջորդ փուլի խնդիրը լինել խաղաղության պայմանագրից հետո:

Հայ-թուրքական սահմանի բացման ուղղությամբ իրականում Թուրքիան քայլեր չի ձեռնարկի մինչև պայմանագրի ստորագրումը: Այն, ինչ որ պայմանավորվել էին՝ դիվանագիտական անձնագիր ունեցողների և երրորդ երկրի քաղաքացիների համար սահմանը բացելը, Թուրքիան կթողնի պայմանագրի ստորագրումից հետո: Սահմանի բացումը Հայաստանին օգուտ կբերի, բայց կունենա նաև իր ռիսկերը, իսկ դրանք պետք է կարողանալ կառավարել:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Վահան Քոչարյանը

Ս/թ. հուլիսի 17-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Վահան Քոչարյանը:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի գործունեությունը միտված է կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, նյութագիտության, ակուստաֆիզիկայի, ակուստիկայի և պլազմայի բնագավառներում միջազգային չափանիշներին և որակին համապատասխան գիտական հետազոտությունների, ինչպես նաև կարևորագույն և հեռանկարային ուղղություններով ինովացիոն բնույթի առաջադեմ գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը: Ներկայացնելով իր պաշտոնավարման ընթացքում ինստիտուտում կատարված աշխատանքները և անելիքները՝ Վահան Քոչարյանը նշեց, որ ինստիտուտում գործում է 10 լաբորատորիա և ներկայացրեց դրանց աշխատանքը: Ինստիտուտի ենթակառուցվածքների արդիականացման նպատակով վերջին երկու տարիներին ձեռք են բերվել նոր սարքավորումներ և իրականացվել են մեծ ծավալի վերանորոգման աշխատանքներ:

«Scopus» և «Web of Science» գիտատեղեկատվական շտեմարաններում վերջին 3 տարիների ընթացքում տպագրված հոդվածների թիվն ավելացել է: 2022 թ.-ին այս շտեմարաններում տպագրվել է 23, 2023 թ.-ին՝ 34, իսկ 2024 թ.-ին՝ 43 գիտական հոդված: Վերջին 3 տարում ինստիտուտում ավելացել են գիտաշխատողները՝ 2020 թ. 120-ից 2024 թ.-ին դառնալով 130:

Ընդլայնվել են միջազգային համագործակցության շրջանակները Իտալիայի միջուկային ֆիզիկայի հետազոտությունների ազգային լաբորատորիաների հետ ռետգենյան օպտիկայի և կանալացման նորագույն տեխնոլոգիաների մշակման ոլորտում, Տոմսկի պոլիտեխնիկական համալսարանի հետ համատեղ լաբորատորիայի շրջանակներում ռենտգենյան միկրոտոմոգրաֆիայի զարգացման ուղղությամբ, Լոնդոնի Ջոն Ադամսի ինստիտուտի հետ գիգատերահերց տիրույթի տոմոգրաֆիայի և սպեկտրոսկոպիայի զարգացման ուղղությամբ: Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ կնքվել է մեծ էներգիայով մասնիկների ճառագայթման խնդիրների շուրջ համատեղ հետազոտությունների պայմանագիր: Ընդլայնվել են համագործակցության շրջանակները ՌԴ գիտությունների ակադեմիայի միրոէլեկտրոնիկայի և հատուկ մաքրության նյութերի տեխնոլոգիական պրոբլեմների ինստիտուտի և Կուրչատովի ինստիտուտի հետ:

«Տեղական գիտական կազմակերպությունների հետ համագործակցությունն է բավականին ակտիվացվել: Կուզենայի հատուկ նշել «ՔԵՆԴԼ» ՍՀԻ արագացուցչի վրա իրականացվող հետազոտությունները, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հետ գտածոների տոմոգրաֆիկ և սպեկտրալ հետազոտությունները»,- ասաց Վահան Քոչարյանը: Նա նշեց, որ հաստատվել է ինստիտուտի զարգացման ռազմավարությունը: Որպես միջնաժամկետ թիրախ՝ առաջիկա 5 տարվա համար նախատեսվում է.

- միջազգային դրամաշնորհային ծրագրերի, թեմատիկ ծրագրերի և այլ ծրագրերի իրականացման արդյունքում ներգրավված ֆինանսավորումը դարձնել առնվազն բազային ֆինանսավորմանը համարժեք
- Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրված հոդվածների թիվը յուրաքանչյուր գիտաշխատողի հաշվով հասցնել 1-ի:
- նոր, թանկարժեք գիտահետազոտական սարքավորումների ձեռքբերում >3
- նոր միջգիտակարգային ու միջգերատեսչական հետազոտություններ >2
- ինստիտուտ-բուհ կապի ուժեղացում՝ առնվազն մեկ կրթական ծրագիր, առնվազն մեկ բազային ամբիոն
- ինստիտուտ-դպրոց կապի ուժեղացման և դպրոցականների հետաքրքրությունը դեպի ֆիզիկա առարկան մեծացնելու նպատակով ստեղծել ֆիզիկայի ժամանակակից կաբինետ-լաբորատորիա՝ գիտահանրամատչելի սեմինարների և լաբորատոր աշխատանքների անցկացման համար:

Վահան Քոչարյանը ծնվել է 1976 թվականին՝ Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղում: 1993-1998 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետում: 2000 թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում, որտեղ էլ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Մինչև 2022 թ. աշխատել է ավագ լաբորանտի, կրտսեր գիտաշխատողի, ավագ գիտաշխատողի և լաբորատորիայի վարիչի պաշտոններում, 2022 թվականից՝ ինստիտուտի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, 2023-2024 թթ. ինստիտուտի տնօրենն է: Վահան Քոչարյանը 80 գիտական հոդվածի և արտոնագրերի հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«Ադրբեջանի 2014 թ. ազգային ատլասի «պատմական» քարտեզների քննություն և «Արևմտյան Ադրբեջան» հորինված եզրույթը» գրքի շնորհանդեսը

Ս/թ. հուլիսի 12-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Ադրբեջանի 2014 թ. ազգային ատլասի «պատմական» քարտեզների քննություն և «Արևմտյան Ադրբեջան» հորինված եզրույթը» երկլեզու գրքի շնորհանդեսը, որը հեղինակել է հայտնի աշխարհագրագետ, քարտեզագետ-քարտեզաբան Ռուբեն Գալչյանը: Գիրքը հրատարակվել է «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի համագործակցությամբ:

Շնորհանդեսին մասնակցեցին գիտակրթական և պետական ոլորտի ներկայացուցիչներ: Մասնակիցներին ողջունեց «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը: «Այսօր ունենք սեղանին դրված մի կարևոր աշխատություն: Ադրբեջանական կեղծարարությունների դեմ պայքարելու ուղղությամբ մեր հիմնադրամի, ակադեմիական ինստիտուտների, առանձին գիտնականների կողմից տարաբնույթ աշխատանքներ տարվում են, և այս գրքի հրատարակությունը կլրացնի դրանք»,- ասաց Ռոբերտ Ղազարյանը:



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ով նաև գրքի խմբագիրն է, նշեց, թե ինչպես առաջացավ այս գիրքը գրելու գաղափարը: «2014 թվականին՝ Ադրբեջանի պետական ատլասի հրատարակումից հետո, գտանք դրա բնօրինակը և փոխանցեցինք պարոն Գալչյանին:



Նա անմիջապես արձագանքեց, և առաջացավ այս աշխատությունը գրելու գաղափարը: Նաև առաջարկեց, որ պետք է բացահայտել այսպես կոչված «Արևմտյան Ադրբեջան» կեղծիքը: Ես շնորհակալ եմ պարոն Գալչյանին այս վիթխարի աշխատանքի համար»,- ասաց Աշոտ Մելքոնյանը:

Գրքի հեղինակ Ռուբեն Գալչյանը նշեց. «Գիրքը փաստագրական է, և եթե իմ գործընկերները շարունակեն անել նման գործեր, ես շատ ուրախ կլինեմ»:

Գրքի առաջին մասը վերաբերում է Ադրբեջանում 2014 թ. ազգային ատլասում օտար քարտեզագետների կողմից կեղծված քարտեզների քննարկմանը: «Ազգային ատլասում կեղծել են բնագիր քարտեզներ՝ հունա-հռոմեական, եվրոպական, բոլոր քարտեզներից հանել են Հայաստան անունը: Գրքի մի մասը հատկացրել են Ադրբեջանը հնագույն քարտեզներում ներկայացնելուն: Սակայն Ադրբեջանը որպես երկիր հնագույն քարտեզներում գոյություն չունի, նա եղել է Պարսկաստանի նահանգներից մեկը»,- ասաց Ռուբեն Գալչյանը:

Գրքի մյուս մասը նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքը որպես «Արևմտյան Ադրբեջան» ներկայացնող ադրբեջանական կեղծարարության բացահայտմանը: «Մեր երկրի վրա Ադրբեջան անունն են դնում: Այս հարցով միջազգային դատարան կարող ենք դիմել»,- նշեց հեղինակը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Բացվեց AFISHE գիտաուսումնական լաբորատորիան

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնում «Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում բացվեց AFISHE գիտաուսումնական լաբորատորիան:

AFISHE ծրագիրը մեկնարկել է 2023 թ. հունվարին, որի հիմնական նպատակն է Հայաստանում և Ուկրաինայում մագիստրոսական կրթության իրականացումը՝ պատրաստելու ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կառավարման և այդ ասպարեզին առնչվող համապատասխան մասնագետներ:

«Ծրագիրը, որ մենք իրականացնում ենք, արդիական է: Հայաստանում շատ ձկնային տնտեսություններ կան, որտեղ անհրաժեշտ են որակյալ մասնագետներ: Ծրագիրը շատ խոստումնալից է և իր հաջողությունն անպայման ունենալու է: Հուսով եմ, որ մեր համագործակցությունն էլ ավելի կխորանա»,- ասաց ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյանը:

«AFISHE ծրագրի շրջանակներում Հայաստանում առաջին անգամ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում և Ագրարային համալսարանում իրականացվելու է «Ձկնային տնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագիրը ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնի մասնագիտական և գիտատեխնիկական հենքի վրա, որտեղ պատրաստվելու են ձկնաբույծներ, ձկնաբաններ, ակվակուլտուրայի մասնագետներ: Լաբորատորիան ծառայելու է այս ուսումնական հաստատությունների մագիստրոսներին՝ կրթական և գործնական պարապմունքներ անցկացնելու համար»,- ասաց ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ Բարդուխ Գաբրիելյանը:

«Մեր կենտրոնն այսօր բավականին հագեցած է տարբեր գիտական սարքավորումներով, բայց սա առաջին դեպքն է, երբ AFISHE ծրագրի շրջանակներում կենտրոնում ստեղծվում է նաև կրթական մասնագիտացված լաբորատորիա: Սա լուրջ ինտեգրման մոդել է, երբ կրթությունն իրականացվում է և՛ բուհում, և՛ գիտական կենտրոնում համատեղ»,- ասաց ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միջազգային կապերի դեպարտամենտի պետ, AFISHE ծրագրի համակարգող Գարեգին Համբարձումյանը նշեց, որ սա այն բացառիկ ծրագրերից է, որտեղ ոչ թե բուհերի, այլ բուհ, գիտակրթական և հետազոտական կենտրոնների համագործակցությունն է: Նման ծրագրեր շատ քիչ կան, և շուտով նման լաբորատորիաներ կբացվեն նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և Ծրագրի գործընկեր ուկրաինական բուհերում:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից: Եվրոպական գործընկերներն են Դուբրովնիկի համալսարանը, Պորտոյի համալսարանը, Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանը Նիտրայում: Ուկրաինական գործընկերներն են Սումիի ազգային ագրարային համալսարանը, Զրի և բնապահպանական ինժեներիայի ազգային ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՊԱՏՄԱԲԱՆԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ

Վերջերս լրացավ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ռուբեն Ազիզբեկյանի ծննդյան 70-ամյակը: Արգասաբեր և բովանդակալից կյանքի ուղի է անցել հոբելյարը պատմագիտության և դիվանագիտության խաչմերուկներով:

Ռ. Ազիզբեկյանը ծնվել է 1954 թ. հունիսի 16-ին Երևանում: Նրա ծնողների աշխատանքային ողջ գործունեությունը կապված է եղել Գիտությունների ակադեմիայի հետ: Հայրը՝ Լենդրուշ Ազիզբեկյանը, երկար տարիներ ԳԱ տպարանի տնօրենն էր, իսկ մայրը՝ Աստղիկ Ալանյանը, աշխատել է ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունում:

1971-1976 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո, հավատարիմ ընտանեկան ավանդույթին, աշխատանքի է անցել գիտության մայր կաճառում՝ որպես ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ լաբորանտ: 1977-1979 թթ. գործուղվել է Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ ԽՍՀՄ պատմության ինստիտուտ, ինչի արդյունքն էր 1981 թ. պաշտպանած թեկնածուական թեզը:

1979-1985 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Իր առաջին մենագրության համար 1984 թ. նա արժանացել է Հայաստանի կոմերիտմիության մրցանակի:

Պատմության ինստիտուտում արժանիորեն գնահատվեց Ռ. Ազիզբեկյանի գիտակազմակերպչական ձիրքը, ինչի շնորհիվ 1985-1991 թթ. նրան վստահվեցին ինստիտուտի գիտական քարտուղարի, իսկ 1991-1994 թթ.՝ ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնները:

Անկախացումից հետո, երբ արտաքին քաղաքականության գերատեսչությունը կայացման փուլում էր, 1994 թ. նա հրավիրվեց ԱԳ նախարարություն և գործուղվեց Մոսկվա՝ ՌԴ-ում ՀՀ դեսպանություն՝ նախ որպես խորհրդական, ապա արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար: Ռ. Ազիզբեկյանը հանրապետության առաջնեկներից էր, ում 1996 թ. շնորհվեց Արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի բարձրագույն դիվանագիտական աստիճան:

1997-1999 թթ. եղել է ՀՀ ԱԳՆ ԱՊՀ վարչության պետ: 1999 -2002 թթ. նա աշխատել է Ուկրաինայում ՀՀդեսպանությունում՝ որպես արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

2002-2006 թթ. աշխատել է ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատում, նախ՝ որպես ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական, ապա նախարարության քարտուղարության խորհրդական:

2006 թ. Ռ. Ազիզբեկյանը կրկին գործուղվեց Մոսկվա և մինչև 2010 թ. աշխատեց ՌԴ-ում ՀՀ դեսպանությունում՝ որպես արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

2010-2022 թթ. աշխատել է ԱԳՆ տարբեր վարչություններում՝ որպես խորհրդական: Այդ տարիներին նա համատեղությամբ աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, միաժամանակ զբաղվել դասախոսական աշխատանքով:

Ավելի քան քառորդ դար ծառայելով դիվանագիտության ոլորտում՝ Ռ. Ազիզբեկյանն իր բազմամյա փորձն ու իմացությունն ի սպաս է դրել հայ-ռուսական և հայ-ուկրաինական կապերի ամրապնդման գործին:

Ավարտելով դիվանագիտական ծառայությունը՝ Ռ. Ազիզբեկյանը 2022 թվականից հիմնական աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, լիովին նվիրվելով գիտական աշխատանքներին:

Ներկայումս նա շարունակում է զբաղվել ՀՀ Երրորդ հանրապետության պատմության, մասնավորապես հայ-ռուսական միջպետական հարաբերություններին առնչվող հարցերով: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում են նաև հետխորհրդային տարածաշրջանի հակամարտության գոտիներում տեղի ունեցող զարգացումները, ինչի արգասիքն են Մերձդնեստրի և Գագաուզիայի հիմնահարցերին նվիրված աշխատությունները:

Ռ. Ազիզբեկյանը հրատարակել է շուրջ 40 գիտական աշխատություն, այդ թվում՝ 4 մենագրություն: Համահեղինակ է մի շարք կոլեկտիվ մենագրությունների, հայոց պատմության դպրոցական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների:

Երկար տարիներ բախտ և պատիվ ունենալով գործընկեր լինելու Ռուբեն Ազիզբեկյանին՝ կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր կոլեկտիվում, ցանկացած պաշտոնում նա միշտ բարձր է պահել հայ մտավորականի վարկը, երբեք չի դավաճանել իր սկզբունքներին, իր ընկերասիրությամբ, բանիմացությամբ, հետազոտողի պրպտուն մտքով մեծ հարգանք է վայելել և վայելում ցանկացած շրջապատում: Անպայման ուզում ենք նշել նաև Ռուբեն Ազիզբեկյանի առաքինի ընտանիքին, որը սատար է կանգնում նրա բոլոր ծրագրերին:

Հոբելյարին մաղթում ենք երկար տարիների բեղմնավոր աշխատանք և քաջառողջություն:

Գուրգեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՀ դոցենտ, ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջերս լույս է տեսել գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Անուշավան Զաքարյանի մենագրությունը՝ «Դավիթ Անանուն. կյանքը և գործունեությունը» խորագրով (Երևան, Հեղինակային հրատ., 2023, 226 էջ): Աշխատությունը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Խմբագիրը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանն է:

Ժամանակի պարբերական մամուլի և արխիվային հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա Ա. Զաքարյանը ստեղծել է հայագիտական ուրույն և ուշագրավ աշխատություն: Մենագրության էջերում հեղինակը Դ. Անանունին ներկայացնում է որպես «XX դարի առաջին երեսնամյակի հայ իրականության կարկառուն դեմքերից» մեկը, որն օժտված էր «գիտելիքների ծով բազմակողմանիությամբ, մտքի բնատուր խորությամբ», ինքնատիպ մտածողությամբ, սեփական տեսակետներն արտահայտելու խիզախությամբ: Սակայն, «Լինելով 1920-1930-ական թվականների առաջին բռնադատվածներից՝ երկար տարիներ նրա կյանքը և գործունեությունը, գիտական, քաղաքական ու գրական ժառանգությունը մի շարք դրդապատճառներով (հիմնականում քաղաքական) հանիրավի քննադատվել, աղավաղվել ու կեղծվել են»: Եվ միայն 1990-ական թվականներից է նրա «կենսագործունեության որոշ շերտերի օբյեկտիվ անդրադարձ եղել» (էջ 7):

Աշխատության տասներկու գլուխներում՝ իրենց ենթաբաժիններով, հեղինակը հանգամանալից քննության է ենթարկում Դ. Անանունի կենսագրությունը, հասարակական-քաղաքական գործչի ձևավորման ընթացքը, գործունեությունը՝ նաև որպես հրապարակագիր, խմբագիր, գրականագետ: Նշվում է, որ նա ծնվել է 1880 թ. մարտի 2-ին Ելիզավետպոլի նահանգի Զևանշիրի գավառի Մեծ շեն գյուղում (հետագայում՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան): Սկզբնական կրթությունն ստացել է Շուշիի քաղաքային դպրոցում, ապա շարունակել ինքնակրթությամբ: Երկար տարիներ ապրել և գործել է Բաքվում: Այդտեղ էլ տեղի են ունեցել առաջին հանդիպումները ժամանակի նշանավոր գրողների՝ Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և այլոց հետ: Հարել է քաղաքական-կուսակցական տարբեր ճամբարների՝ դաշնակցական, սոցիալ-դեմոկրատական, հնչակյան՝ վարելով նաև ղեկավար պաշտոններ: Թողել է գրական հարուստ ժառանգություն՝ շուրջ 10 հատոր ծավալով, ներառյալ «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր կապիտալ ուսումնասիրությունը, որոնցում հետևողականորեն արծարծել է «հայության հավաքման գաղափարը, այն է՝ կուլտուրական վերածնունդ, նյութական հզորություն, ազգային ինքնագիտակցություն և հայկական տարածքների միավորում: Իսկ այս ամենի նախապայմանն անկախության անհրաժեշտությունն էր» (էջ 13, 14):

Դ. Անանունը մասնակցել է Մ. Գորկու նախաձեռնած և 1916 թ. ապրիլի վերջին Պետրոգրադում լույս տեսած «Հայ գրականության ժողովածուի» հրատարակությանը, որը «յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ»: Ավելին, ժողովածուն բացվում է Դ. Անանունի «Հայկական հարցը Ռուսաստանում» վերնագրով ծավալուն հոդվածով: 1916 թ. Բաքվում լույս է տեսնում նաև Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870)» եռահատոր աշխատության առաջին հատորը, որն արժանանում է գրեթե համընդհանուր ուշադրության և գնահատանքի:

Անցյալ դարի 10-ական թվականների գործունեության մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Դ. Անանունի գրական-հասարակական առնչությունները Հովի. Թումանյանի, Վ. Տերյանի, Դ. Դեմիրճյանի հետ, ինչպես նաև վերաբերմունքը գրական-մշակութային նշանակալից իրադարձությունների նկատմամբ: Դարասկզբին նա արդեն ակտիվ գրական-խմբագրական գործունեություն էր ծավալել: 1911-1912 թթ. Բաքվի «Նոր կյանք» երկշաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչն էր, 1912-ին Բաքվում տպագրել էր «Մեր ուղին» ժողովածուն, հեղինակ էր մի շարք պատմաբանասիրական բնույթի հոդվածների:

Աշխատության մեջ Ա. Զաքարյանն ընդգծում է, որ 1916-1917 թթ. Դ. Անանունի ազգային-հասարակական, գրական-մշակութային գաղափարների և համոզմունքների տեսակետից կարևոր են նաև նրա գնահատականները Վ. Բրյուսովի՝ Բաքվում ունեցած դասախոսության և Հովի. Թումանյանի գլխավորած Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեության սկզբունքների վերաբերյալ: Վ. Բրյուսովի դասախոսության մասին նրա արձագանքը միանգամայն դրական էր: Նա բարձր է գնահատում հատկապես հայերենից Բրյուսովի կատարած «հոյակապ» թարգմանությունները, որովհետև «նրան աջողվել է պահպանել մեր բանաստեղծական գործերի ձևը, համն ու հոտը և շքեղությունը…» (44, 45): Ինչ վերաբերում է Հայ գրողների կովկասյան ընկերությանը, ապա Դ. Անանունը պաշտպանում էր ամուր «կազմակերպված կյանքի», հայ գրողների միաբանության և համախմբվածության սկզբունքները: Դրույթներ, որոնք մոտ ու հոգեհարազատ էին նաև Հովի. Թումանյանին:

Բավական բուռն ու դժվարին է եղել Դ. Անանունի հասարակական-քաղաքական և գրական գործունեությունը 1917-1920 թվականներին Անդրկովկասում փոթորկվող իրադարձություններում: 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում ընթացող Հայոց համախորհրդակցության երկրորդ նիստում (սեպտեմբերի 30-ին) ունեցած իր ելույթում՝ «Մոմենտը և նրա հետ կապված խնդիրները», քննարկում է հնի ու նորի միջև կողմնորոշման խնդրի օգուտներն ու վնասները հայոց ազգային շահերի տեսանկյունից: Ա. Զաքարյանը կարևորում է Բաքվի՝ 1918 թ. մարտյան դեպքերին Դ. Անանունի ցուցաբերած անմիջական մասնակցությունը:

Մենագրության մեջ հեղինակն առանձին գլուխ է նվիրել 1918-1920 թթ. Ղարաբաղի (Արցախի) շուրջ տեղի ունեցած ճակատագրական իրադարձությունների շրջանում Անանունի ակտիվ գործունեությանը: Չծավալվելով նկատենք՝ 1918 թ. դեկտեմբերից նա Հովի. Թումանյանի նախագահությամբ գործող «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» լիազոր ներկայացուցիչն էր Ղարաբաղի (Շուշիի և Զևանշիրի գավառների) հայ բնակչության կրած նյութական վնասների քննության գծով:

1919-1920 թթ., կարելի է ասել, վճռորոշ տարիներ էին Դ. Անանունի համար: Նրա մինչ այդ ունեցած փորձը, գիտելիքներն ու կարողությունները նկատվել են, և այդ շրջանում նա զբաղվել է գրական, պետական, հասարակական ակտիվ գործունեությամբ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Դ. Անանունի խմբագրությամբ հրատարակվող «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթին առնչվող Ա. Զաքարյանի արժեքավոր դիտարկումները:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Դավիթ Անանունը մնացել է հայրենիքում: Անցնելով ազգային-քաղաքական, գաղափարախոսական ստորջրյա խութերի միջով՝ նա հավատարիմ է մնացել հայոց անկախ պետականության, հայահավաքման, ազգային առողջ ու անվտանգ ապագայի կերտման իր դավանած հիմնարար սկզբունքներին: Դրա խոսուն վկայություններն են Էջմիածնի գիտական ինստիտուտի աշխատակից լինելու իրողությունը (1921-1922 թթ.), Հայաստանի պետական թանգարանի հեղափոխության բաժնի վարիչ եղած ժամանակ (1923-1926 թթ.) ծավալած հայանպաստ բուռն գործունեությունը:



Չնայած այդ ամենին՝ կյանքի վերջին մեկուկես տասնամյակը (1927-1943 թթ.) Դ. Անանունն անցկացրել է բանտերում և աքսորավայրերում (Թիֆլիս, Երևան, Մոսկվա՝ Բուտիրկա, Սիբիր՝ Տոմսկի շրջանի Նարիմի երկրի Իլինո գյուղ, Աստրախան, Ուֆա): Հեղինակի բնորոշմամբ խառնակ ժամանակներ էին, և ազգային ավանդական արժեքների պաշտպանության, հայահավաքման, «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր ուսումնասիրության հիմքում ընկած մի շարք այլ գաղափարներ սուր քննադատության էին ենթարկվում 1920-30-ական թվականներին խորհրդային ուղղափառ գաղափարախոսության կրողների կողմից:

Հայագետ, հասարակական-քաղաքական գործիչը մահացել է 1943 թ. Աստրախանում, արդարացվել է տասնամյակներ անց՝ 1989 թվականին:

Անուշավան Զաքարյանի՝ Դ. Անանունի կյանքի և գործունեության հնարավորինս ամբողջական քննությունը ներկայացնող արդիական կարևոր հնչեղություն ունեցող այս աշխատությունն ուղղված է նախևառաջ պատմական արդարության վերականգնմանը՝ անցյալի մեր շատ «մոռացված» դեմքերի հետ միասին նրան ևս «վերադարձող անունների» պատվավոր շարքում դասելու հրամայականին:

Պետրոս ԴԵՄԻՐՃՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԱՆԻՆ

Այս տարի լրանում են Անիի պեղումների 120-ամյակը, ինչպես նաև արշավախմբի ղեկավար Նիկողայոս Մառի 160, արշավախմբի աջակից Թորոս Թորամանյանի 160, Հայաստանում հնագիտական աշխատանքների կազմակերպիչ Աշխարհբեկ Քալանթարի 140-ամյակները:

Հայ ժողովրդի պատմության մեջ Անին ունեցել է անգնահատելի նշանակություն որպես միջնադարյան մշակույթի հատուկ օրինակ, որպես քաղաքային, աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետության ու մշակույթի կազմավորման և զարգացման մի կարևորագույն օրրան:

Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաք Անին դարձավ երկրորդ համալսարան ակադեմիկոս Հովսեփ Օրբելու համար, իսկ նրա հնագիտական ուսումնասիրությունների թագն ու պսակը կազմեցին հայոց երբեմնի գեղաշուք մայրաքաղաքի՝ Անիի պեղումները: Օրբելին շուրջ տասը տարի աշխատեց Անիում, նրա համար այդ

Անիի պարիսպները (1910 թ.)

Երիտասարդ Հ. Օրբելին (1909)

պեղումները դարձան հնագիտական հիանալի դպրոց: Շատ գիտելիքներ ձեռք բերեց նա համալսարանի լսարաններում, սակայն որպես հնագետ ձևավորվեց թերևս ոչ այնքան Նևայի ափին, որքան Անիում:

1906 թ. ամռանը Օրբելին մեծ հույսերով ու հույզերով առաջին անգամ ոտք դրեց Անի: Մառի խոսքով՝ Կովկասի հնագիտական պսակի ամենախոշոր մարգարիտը՝ ավերակված Անին, դիմավորեց նրան:

Պետք է պատկերացնել, թե ինչ բերկրանք է ապրել Օրբելին, երբ առաջին գիտարշավը հաջողությամբ է պսակվել, քանի որ հենց այդ ժամանակ հայտնաբերվեց Գագիկ Ա թագավորի արծանը՝ տաճարի մանրակերտը ձեռքին: Գագկաշենում գտնվեց նաև 11-րդ դարի պղնձյա հսկայական մի ջահ՝ թագի ձևով, չորս կողմից թռչող աղավնաձև ճրագակալներով:

Զարմանահրաշ մի աշխարհ էր բացվել: Աշխարհիկ ու հոգևոր կյանքի մի անհատնում հնավայր էր Անին, և Օրբելին յուրաքանչյուր նյարդով կապվեց հայոց հնամենի մայրաքաղաքին:

Պեղվեցին Բագրատունիների հսկա պալատի, բաղնիքի, եկեղեցիների ավերակները, Առաքելոց հինգգմբեթանոց եկեղեցին՝ իր գավիթներով, բազմաթիվ այլ եկեղեցիներ, քաղաքացիական շենքեր, շինություններ, պալատներ, հայտնաբերվեցին բազմաթիվ գտածոներ: Պեղվեց նաև Անիի գլխավոր փողոցը, հայտնաբերվեցին ոչ միայն ճարտարապետական կառույցներ, արվեստի մեծարժեք հուշարձաններ, այլև հսկայական քանակությամբ հնագիտական առարկաներ, որոնց մեծ մասը պատրաստվել էր Անիում: Ճարտարապետական և արվեստի կոթողներից բացի, ուսումնասիրվեցին միջնադարյան քաղաքաշինությունը, քաղաքի սոցիալական և վարչական կառուցվածքը, առևտուրն ու արհեստագործությունը:

Հովսեփ Օրբելու ձեռքով է դրվել Անիի հնադարանի հիմնաքարը: Մառը բարձր էր գնահատում Օրբելու աշխատանքը և 1906 թ. հաշվետվության մեջ նշում է. «Վերջապես շատ էին Անիի թանգարանի մաքրման, կարգաբերման, հնությունների նկարագրման ու տեղադրման աշխատանքները, սակայն այստեղ ճարվեց այն ամենը, ինչն անհրաժեշտ էր: Իսկ այն, ինչ արված է, ձեռք է բերվել շնորհիվ այն բանի, որ այս տարի ես ունեի հիանալի աշխատակիցներ, նկարիչ Պոլտորացկի և ուսանող Օրբելի, որոնք, առանց ձեռքերը ծալելու, թանգարանում աշխատում էին ոչ միայն ցերեկները, այլև երբեմն նաև գիշերները»:

Անիի գիտարշավի աշխատակիցներն ու մշտաբնակները, որոնք այսպես թե այնպես կապված էին Անիի պեղումների աշխատանքներին, համարվում էին անեցիներ: Օրբելուն ևս բախտ վիճակվեց կրել անեցու պատվավոր անունը:

Անիի հնագիտական արշավախումբը (1912 թ.)

Նա ապրեց ավերակների քաղաքում, տեսավ մեր անցյալի մեծ վարպետների ու հմուտ քարագործների կերտած հազարամյա կյանք ունեցող ծանրանիստ պարիսպներն իրենց հզոր դարպասներով, կիսակործան տաճարներն ու պալատները, իջևաններն ու կամուրջները: Տեսավ մեր նախնիների մամռապատ գերեզմանները, ճակատամարտերի դաշտերն ու ձորերը, տեսավ վիշապակիր բուրգերը:

Օրբելին ապրեց գիտարշավի աշխատակիցների ու մշտաբնակ անեցիների, Անի քաղաքի ավագագույնի՝ պրոֆեսոր Ն. Մառի, Ա. Վրույրի, Միքայել վարդապետի, Թ. Թորամանյանի, Ա. Քալանթարի, Ա. Ֆեթվաճյանի, Պոլտորացկու, հնագիտական արշավախմբի մասնակիցներ Գ. Ղափանցյանի, Լ. Քալանթարի, Ն. Բունիաթյանի, Տարագրոսի, Գ. Չուբինովի, Ն. Տոկարսկու, պեղումների ընթացքում աշխատող բանվորների հետ: Ահա սրանք էին երբեմնի բազմամարդ Անի քաղաքի սակավաթիվ բնակիչները, որոնք, փոխադարձ հարգանքով ու սիրով կապված լինելով միմյանց, շունչ ու հոգի էին տալիս այդ ավերակ քաղաքին:

Անուրանալի է Օրբելու թողած ժառանգությունն ապրող և գալիք սերունդներին: Անիի պեղումներից հետո նրա ուսումնասիրությունների արդյունքում սկսեցին հրատարակվել Անիին և հնություններին նվիրված աշխատությունները: 1910 թ. Մառի հիմնադրած «Անիի մատենաշարում» լույս տեսավ Օրբելու կազմած «Անի քաղաքի ուղեցույցը»: Գիտական առավել մեծ նշանակություն ունի Օրբելու կազմած Անիի թանգարանի կատալոգը: Այնուհետև լույս տեսավ «Անիի ավերակները» աշխատությունը:

Օրբելու հրատարակած այդ աշխատություններն արժեքավոր ներդրում էին Անիի հնությունների վերաբերյալ գիտական գրականության մեջ:

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին իր տիտանական կերպարով ու անծայրածիր գիտական հետաքրքրություններով ընդգրկեց ուրարտական տարեգրություններն ու ասեղնագործ Անին, հայ ժողովրդական էպոսն ու միջնադարյան առակները, հայ ճարտարապետությունն ու վիմագրությունը, սասանյան արվեստը, քրդերենը, Մոկաց, Տարոն ու Սասնա բարբառները և շատ ուրիշ բնագավառներ:

Նա համատեղում էր զորավարի կամք, արվեստագետի նուրբ ճաշակ, զորեղ միտք, ֆենոմենալ հիշողություն, նորն ընկալելու զարմանալի ունակություն, փայլուն հռետորի ու մեծ քաղաքացու անուրանալի հատկություններ, որոնք լիուլի ի հայտ եկան Հովսեփ Օրբելու՝ Պետական էրմիտաժի տնօրենի և ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտի պաշտոններում աշխատելու տարիներին:

Մարիներ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ
Օրբելի եղբայրների տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆ ՈՒ ՏԱՐԵԳԻՐԸ

Արցախյան պատերազմի ռազմադաշտերում ծնվեցին, կոփվեցին և կայացան տասնյակ ու տասնյակ լեգենդար անհատներ, որոնք կարողացան լիուլի դրսևորել իրենց լավագույն որակներն ու հատկությունները: Այդպիսի անհատներից է արցախյան բոլոր պատերազմների մասնակից Մարտին Բաղդասարյանը, ում ծննդյան 80-ամյա հոբելյանը լրացավ վերջերս:

Ծնվել է 1944 թ. մարտի 6-ին Կոտայքի մարզի Ալափարս գյուղում: Նրա աշխատանքային կենսագրությունն անցել է Չարենցավանի ձեռնարկություններում:

1988 թ. փետրվարյան օրերին հայ ժողովուրդը մեծով և փոքրով հավաքվեց Օպերայի հրապարակում՝ դառնալով միասիրտ և միաբռունցք, միակա՛մ ու վճռակա՛ն: Մ. Բաղդասարյանը Ալափարսից, Չարենցավանից, Բջնիից, Հրազդանից եկած իր ընկերների հետ էր, դրոշակակիր էր ու պայքարի առաջին գծում: Հետագայում, երբ սկսվեց պատերազմը, Մարտինի ընկերներն ու համախոհներն իր զինակիցները դարձան: Նրանց շարքում հետագայում առանձնացավ Բջնիի ջոկատի քաջարի հրամանատար Բեկը (Աղաբեկ Խաչատրյան): Բեկն ու Մարտինը պայքարի ընկերներ դարձան ամենուր՝ ընդհուպ ցայսօր: Պատերազմը սկսվեց, և Մարտինը դիրքերում և խրամատներում մնաց մինչև վերջին օրը, երբ հաստատվեց զինադադար: Այդ տարիներին նրա մարտական ընկերների շրջանակը շատ լայն էր և ամենուր էր՝ մարտնչող Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

Մարտինը սկզբում մարտական մկրտությունը ստացավ «Բալուջա» ջոկատի կազմում, հետո ընդգրկվեց ավելի մեծ զորամիավորումներում: Նրան անմիջապես նկատեցին և առանձնահատուկ վերաբերմունք դրսևորեցին Վազգեն Սարգսյանը, լեգենդար Կոմանդոսը և ուրիշներ:

Պատերազմի ավարտից հետո Մ. Բաղդասարյանը ծառայությունը շարունակեց ՀՀ ՊՆ համակարգում: Նրան շնորհվեց փոխգնդապետի զինվորական կոչում:

Զորացրվելուց հետո Մ. Բաղդասարյանը ծավալեց ակտիվ հասարակական գործունեություն: 2000-ական թվականների սկզբին իր ընկերների հետ հիմնադրեց «Ազատագրում» անունով հասարակական հայրենասիրական կազմակերպությունը: Ապա «Ազատագրում» մատենաշարով սկսեց մեկը մյուսի հետևից հրատարակել հատորյակներ, որոնցում տրոփում է Արցախի ազատամարտի կենդանի շունչը: Այդ մատենաշարով մինչև օրս լույս է տեսել 13 հատոր, որոնցում ներկայացված են մեր ժողովրդի ապրած ծանրագույն տասնամյակները, երբ սոսկալի զրկանքների գնով կերտվեցին մեր փառահեղ հաղթանակները:

«Ազատագրումի» հատորյակները կարևորվում են նաև պատմագիտական առումով, քանզի գրված են պատերազմի ականատեսի և մասնակցի կողմից: Ուստի վավերականության առումով վերոնշյալ հատորները սկզբնաղբյուրային արժեքի նշանակություն են ձեռք բերում:

Իր ակտիվ ու ազգօգուտ գործունեության շնորհիվ Մ. Բաղդասարյանը ճանաչված անուն է հայաստանյան իրականության մեջ: Նա միշտ հայրենի ժողովրդի հետ է, ժողովրդի կողքին: Խաղաղ տարիներին իր փորձն ու գիտելիքներն է փոխանցում մատաղ սերնդին՝ որպես զինղեկ պաշտոնավարելով մայրաքաղաքի դպրոցներում: Իսկ վտանգի և պատերազմի ժամանակ, առանց երկմտելու, ձեռքն է վերցնում ինքնաձիգն ու շտապում ճակատ: Ահա այսպես՝ անվարան ու անվեհեր, նա ռազմադաշտ հասավ 2016 թ. ապրիլին բռնկված քառօրյա պատերազմի ժամանակ և 2020 թ. աշնանը՝ քառասունչորսօրյային:

Այդ երկու պատերազմների ժամանակ Մարտին Բաղդասարյանն ամենատարեց ազատամարտիկն էր մարտադաշտում գտնվողների մեջ, ինչին անդրադարձ է եղել հայաստանյան և սփյուռքյան մամուլում:

80-ամյա հոբելյարը նախապատրաստում է նոր հատորների տպագրությունը, և այդ հարցում նրան մեծապես սատարում են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտնականները: Ի դեպ, նրա մի քանի գրքերի շնորհանդեսներն ու անդրանիկ քննարկումները կայացել են այս ինստիտուտում:

Արցախյան ազատամարտի վաստակաշատ վետերան, հայկական բանակի փոխգնդապետ, գրող Մարտին Բաղդասարյանը շարունակում է ապրել իր ժողովրդի մեծ ու փոքր հոգսերով և տագնապներով, հայոց լուսավոր, խաղաղ ու անվտանգ ապագայի ուղիների որոնումներով:

Ալբերտ ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԵՐԵՎԱՆԸ ԽՐՈՒՇՉՈՎՅԱՆ ՁՆՀԱԼԻՑ ՀԵՏՈ

1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏ ՈԳԻՆ*

1961 թ. մայիսին ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ, ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովն այցելեց Հայաստան: Սա խորհրդային պետության ղեկավարի առաջին այցն էր Երևան, որին այստեղ նախօրոք էին պատրաստվել: Երևան-Սևան ճանապարհին՝ քաղաքի մատույցներում, ի պատիվ նրա ժամանման, տեղադրվեց, ինչպես հիմա են ասում, ինստալյացիա: Դա ոճավորված ճայի մեծ բետոնե քանդակ էր:

Արվեստից գլուխ չհանող Խրուշչովը, դեպի Սևանա լիճ գնալու ճանապարհին տեսնելով ճայի քանդակը, կանգնեցնում է ավտոշարասյունը և խիստ քննադատում այն: Նրան զայրացրել էր, որ այն գումարը, որը կարող էր ներդրվել բնակելի շենքերի կառուցման մեջ, օգտագործվել էր, ըստ էության, անօգուտ կառույցի վրա: 1955 թ. ՍՍՀՄ Մինիստրների սովետը «Ճարտարապետության և շինարարության մեջ ավելորդությունները վերացնելու մասին» ընդունած որոշմամբ փաստորեն ճարտարապետության մեջ նոր ոճի սկիզբը դրեց: Նեոկլասիկ տիպի շենքերի ճակատների հարդարանքը հայտարարվեց ժողովրդական միջոցների անհարկի վատնում: Դրանից հետո նախապատվությունը պաշտոնապես տրվեց պարզ ու հասարակ ձևերին:

Սա, իհարկե, աբսուրդ է, բայց Խրուշչովը, որն իսկապես չէր հասկանում ժամանակակից արվեստը, հայհոյանքով էր խոսում ավանգարդիստների ցուցահանդեսների մասին, ճարտարապետության նոր ոճի զարգացման խթան դարձավ, ոճ, որը հայտնի է որպես «խորհրդային մոդեռնիզմ»: Իսկ «ճայը» դարձավ խորհրդային ճարտարապետական մոդեռնիզմի հայկական տարբերակի առաջին ծիծեռնակը: Խորհրդային մոդեռնիզմը շուտով ձեռք բերեց համաշխարհային հռչակ:

Մի շարք գործոններ կարևոր դեր են խաղացել հայկական մոդեռնիզմի զարգացման գործում: Նախ, իհարկե, դա 1955 թվականի որոշումն էր, որը փոխեց խաղի կանոններն ամբողջ երկրում, ներառյալ Հայաստանի մայրաքաղաքում: Մյուս գործոնը շինանյութի՝ բետոնի օգտագործումն էր: Բետոնը ներխուժեց Երևանի շինարարական պրակտիկա 1960-ականների սկզբին: Ճարտարապետները զգացին դրա առավելությունները՝ ճկունությունը, ամրությունն ու էժանությունը:

Խրուշչովի այցից մեկ տարի անց Երևանի քաղաքապետ դարձավ ինժեներ և ճարտարապետ, «Երևաննախագիծ» ինստիտուտի հիմնադիր և նախկին տնօրեն, Լենինականի նախկին քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանը: Նա Երևանին սիրահարված մարդ էր ու հիանալի գիտեր քաղաքը: Մոտ 13 տարի լինելով Երևանի քաղգործկոմի նախագահ՝ նա նախաձեռնեց քաղաքն արդիականացնելու լայնածավալ նախագիծ: Ճարտարապետության հետազոտող Կարեն Բալյանը Հասրաթյանին անվանել է «հայկական մոդեռնիզմի գուրու»:

Ազատությունը դարձավ վաթսունականների հիմնական հասկացությունը: Ստալինյան բռնաճնշումների սարսափելի տասնամյակներին հաջորդեց ձնհալը՝ իր ստեղծագործական հզոր ներուժով: Իսկ Գրիգոր Հասրաթյանն առաջնորդ էր, որը ոչ միայն ստեղծագործական ազատություն էր տալիս երևանյան ճարտարապետներին, այլև ինքն էր հենց «թիվ մեկ ճարտարապետը», որը համարձակ և կրեատիվ սահմանում էր քաղաքի նոր դեմքը: Իսկ Երևանի կյանքում այդ հանդգնությունն արտահայտվում էր քաղաքային տարածքի կազմակերպման նոր սկզբունքներով:

Քաղաքաշինական խոշոր նախագծերից մեկը Աբովյանի՝ Երևանի կենտրոնական և ամենահին փողոցներից մեկի հիմնովին վերակառուցումն էր: Որպես ոճական մեկ ամբողջություն ձևավորվեց Օղակաձև զբոսայգին: Կառուցվեց լայն ու ընդարձակ Սայաթ-Նովա պողոտան, որի մայթերի երկայնքով տնկվեցին սպիտակ կեռասենիներ: Օպերային թատրոնի շենքը շրջապատող այգում բացվեց Կարապի լիճը:

Երևանի մոդեռնիզմը քաղաքին պարգևեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը՝ նվիրված 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, «Ռոսիա» կինոթատրոնի շենքը, «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը, Մարզահամերգային համալիրը, Երիտասարդական պալատը, Կասկադը… Այս և շատ այլ շենքեր ու կառույցներ զարդարեցին քաղաքը՝ տալով նրան նոր և ժամանակակից շունչ:

1950-ականների երկրորդ կեսին և 1960-ականներին Երևանը դարձավ աշխարհի նշանակալի գիտական կենտրոններից մեկը: Դա տեղի ունեցավ աշխարհահռչակ գիտնականներ Վիկտոր Համբարձումյանի, Աբրահամ և Արտեմ Ալիխանյանների, Սերգեյ Մերգելյանի և այլոց շնորհիվ: Հիմնադրվեցին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, Գիտությունների ակադեմիայի հաշվողական կենտրոնը, Երևանում կառուցվեց տարրական մասնիկների արագացուցիչը:

1960-ականների Երևանը մտքի և գաղափարների ազատության տարածք էր: Քաղաքային սրճարաններում կրքոտ վեճի էին բռնվում նկարիչները և գրողները, Ֆիզիկայի ինստիտուտի գիտնականների տանը (ինչպես նաև ԿԳԲ ակումբում) կարելի էր դիտել ԽՍՀՄ-ում արգելված ֆիլմեր, իսկ համերգասրահներում հնչում էր Բրիտտենի երաժշտությունը, որը հաճախ գալիս էր Դիլիջան Շոստակովիչի և Ռոստրոպովիչի հրավերով:

Իսկ 1968 թվականին քաղաքը նշեց իր 2750-ամյակը: Տոնակատարությունները դարձան համաժողովրդական, չնայած անցկացվում էին «սովորական» կոմունիստական սցենարով՝ հանրապետական մարզադաշտում մեծ համերգով և Լենինի հրապարակում անցկացվող միջոցառումներով:

Դրանք բոլորը քաղաքականության հետ կապ չունեցող իրադարձություններ էին:

Բայց կային նաև քաղաքական գործընթացներ: Այսպես, 1965 թվականի ապրիլի 24-ին անցկացվեց ցույց, որի մասնակիցները նշում էին Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը: Զարմանալի է, որ սա, թերևս, ԽՍՀՄ-ում իշխանությունների կողմից չարտոնված միակ ցույցն էր, որ չցրվեց ամենադաժան եղանակով:

Այսպիսով, 1960-ականներին Երևանում քաղաքական իրադարձություններն արդեն փողոց էին դուրս եկել: Եվ սա այն Խորհրդային Միությունում, որտեղ այլախոհության ցանկացած դրսևորում ճնշվում էր ցուցադրական դաժանությամբ:

Ձևավորվեց սկզբունքորեն նոր քաղաքային միջավայր՝ որակապես նոր քաղաքացիներով: Կարելի է ասել, որ Երևանը՝ որպես լիարժեք մայրաքաղաք, որպես ժամանակակից դինամիկ ակտիվ քաղաք, ձևավորվեց հենց 1960-1970-ական թվականներին:

Եվ նաև այս ամենը նպաստեց ոչ միայն մայրաքաղաքային յուրօրինակ մշակույթի, այլև նոր համայնքի՝ երևանցիների ձևավորմանը:

Եվ գիտե՞ք ինչ: Հենց այս շրջանի Երևանը դարձավ մեր կարոտի իդեալականացված քաղաքը: Հենց այս Երևանի մասին է, որ հիշում են նրա նախկին և ներկա բնակիչները, հենց այդ քաղաքում էին «Նաիրի» կինոթատրոնը և «Պոնչիկանոց» մանկական սրճարանը, «Արարատ չեմպիոնական թիմը և բակային հավաքույթները թթի ծառի տակ:

---

*Տպագրվում է ըստ Մարկ Գրիգորյանի «Երևան. քաղաքի կենսագրությունը» գրքի (2023 թ.):

Բոսթոնի Ջազի լեգենդը. Ալ Վեգա

Ավելի քան ութ տասնամյակ ջազային արվեստն ընդունված և սիրված է Հայաստանում: Եվ ավելի քան ուշագրավ է, որ անգամ ջազի հայրենիքում՝ ԱՄՆ-ում, նույնպես ունեցել ենք հայազգի մեծանուն ջազմեն... 70 տարուց ավելի Բոսթոնի և շրջակայքի ջազի ասպարեզում անխոնջ գործունեություն է ծավալել դաշնակահար, վիբրաֆոնիստ և գործիքավորող Արամ Վագրամյանը՝ հայտնի Ալ Վեգա անունով: Մի հոդվածագրի կարծիքով Նոր Անգլիա նահանգի ջազի պատմությունը մարմնավորվել է այդ հայազգի երաժշտի մեջ...

Վագրամյանը ծնվել է 1921 թ. հունիսի 22-ին Մասաչուսեթսի Ուորչեսթր քաղաքում: Ենթադրում ենք, որ Վիլյամ Սարոյանն իր «Ռոք Վագրամ» վեպի հերոսի Վագրամյան ազգանունը կարող է փոխառած լինել Ալ Վեգայի անունից: Կյանքի վերջին տարիներին Դեյվիդ Վիլյամսոն Սնիդին տված հարցազրույցում Ալ Վեգան ասել է. «Ես հայ եմ: Ուորչեսթրը լեցուն էր հայերով: Մայրս Բուլղարիայից էր, հայրս՝ Հայաստանից: Նրանք հավանաբար եկել էին Ուորչեսթր, քանի որ դա հայերի համար Մեքքա էր: Նրանք այնտեղ որոշ մարդկանց գիտեին հին երկրից»:

Արամի ծնունդից կարճ ժամանակ անց Վագրամյանները որդու և դստեր՝ Մանուշակի (Վիոլետ) հետ հաստատվել են Մասաչուսեթսի Չելսի քաղաքում: Հայրը ցուցանակներ է նկարել՝ ստորագրելով Վեգա, որն էլ հետագայում որդին դարձրել է բեմական անուն: Արամը վաղ մանկուց ունեցել է երկու մեծ սեր՝ երաժշտությունը և բեյսբոլը, որոնցով էլ պրոֆեսիոնալ ձևով զբաղվել է ողջ կյանքում: Հինգ տարեկանից նվագել է դաշնամուր, իսկ Չելսիի միջնակարգ դպրոցում սովորելու տարիներից հանդես է եկել պրոֆեսիոնալ բեմերում:

Արամ Վագրամյանը մեկ տարի ուսանել է Հյուսիսարևելյան համալսարանում, իսկ 1938 թ. դաշնամուր և վիբրաֆոն նվագել Բոսթոնի «Հայհաթ» ակումբում՝ ելույթներ ունենալով ժամանակի ճանաչված ջազ երաժիշտներ Սիդնեյ Բեքեթի, Ռեդ Ալենի և Ջո Ջոնսի հետ: 1942-ին զորակոչվել է բանակ և չորս տարի ծառայել Վիրջինիա նահանգում: Այստեղ էլ նա հանդիպել է ապագա կնոջը՝ Մարթային, որի հետ համատեղ ապրել է 55 տարի և ունեցել երկու զավակ՝ Ալան և Դայան անուններով: Որդին շարունակել է հոր սպորտային գիծը՝ դառնալով հաջողակ բեյսբոլիստ, իսկ դուստրը՝ երաժշտականը: Դայան Վագրամյանը երգչուհի և երգահան է, փոփ երգերի հեղինակ, որը հաճախ մասնակցել է հոր նախագծերին:

Հետպատերազմյան տարիներին ջազի ասպարեզը հարուստ չէր, ուստիև Ալ Վեգան աշխատել է տարբեր պարային խմբերի հետ՝ միաժամանակ ուսանելով Նոր Անգլիայի կոնսերվատորիայում: Սաքսոֆոնահար Թեդ Գոդարի հետ հիմնել է ջազ հնգյակ, նվագել Ջորջ Գրեհեմի նվագախմբի հետ, 1950-ին իր առաջին ձայնագրությունը կատարել հայտնի սաքսոֆոնահար Սերժ Խալոֆի հետ, իսկ 1953-ին թողարկել է «Դաշնամուրի սոլոներ» տրիո ալբոմը: Հիմնել է «Ալ Վեգա տրիո» ջազ եռյակը, թողարկել տասնյակ ալբոմներ: Տարիներ շարունակ շաբաթ երեկոներին ջազի սիրահարներն ունկնդրել են նրան Բոսթոնի «Լաքի լաունջ» ակումբում, որտեղ Ալ Վեգան կատարել է մեծ մասամբ Ֆրենք Սինաթրայի մեղեդիները... Հումորով լի նրա կատարումները մեծ ժողովրդականություն են վայելել, և Ալ Վեգան շուտով ճանաչվել ու սիրվել է ԱՄՆ-ի արևելյան մասի երաժշտասերների կողմից: Նա նվագել է տարբեր ջազ ակումբներում, նվագակցել Բոսթոնում հյուրախաղերով հանդես եկող ջազային մեծությունների հետ՝ Դյուք Էլինգթոն, Մայլզ Դևիս, Չարլի Փարքեր և շատ ուրիշներ:

Իր մարդամոտ բնավորության շնորհիվ Ալ Վեգան շահել է բազմաթիվ մարդկանց սերն ու մտերմությունը: Նրա հետ ընկերություն են արել ոչ միայն երաժիշտներ, այլև սենատորներ, կոնգրեսմեններ, նահանգապետներ և քաղաքագլուխներ՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

«Նոր Անգլիայի ջազի պատմության քայլող հանրագիտարան», «Բոսթոնի կենդանի ջազ լեգենդ», «Պարոն դաշնամուր» անվանված Ալ Վեգան իր ստուդիայում աճեցրել է տաղանդավոր դաշնակահարների և վոկալիստների մի քանի սերունդ:

Էվերեթում՝ Մասաչուսեթսի իր բնակավայրում, Ալ Վեգան եղել է նաև բեյսբոլի տեղական երկու թիմի մարզիչը: 2008-ին Էվերեթի «Բեյբ Ռութ» բեյսբոլի լիգան Ալ Վեգային հռչակել է «տարվա մարդ»՝ նրա պատվին հիմնելով «Վեգա գավաթ» մրցանակը: Այդ առթիվ Բոսթոնի ռադիոյի խոսնակն ասել է. «Ալն ինձ հիշեցնում է տեսակավոր գինի: Ժամանակի հետ նրա որակն ավելի է բարձրանում: Երաժշտության հազարավոր սիրահարների անունից, որոնք տարիների ընթացքում վայելել են այս յուրօրինակ անհատականության պարգևները, մենք ասում ենք. «Շնորհակալ ենք, Ա՛լ, դու ամենահրաշալին ես»:

«Բոսթոնի պատմության ամենասիրված երաժիշտներից» մեկը համարվող Ալ Վեգան մահացել է 2011 թ. Բոսթոնում՝ թողնելով ջերմ հիշողություններ և հարյուրավոր ձայնագրություններ: Նույն թվականին լույս է տեսել Լեոնարդ Լյուիս Բրաունի «Բոսթոնի ջազի լեգենդը. Ալ Վեգայի պատմությունը» գիրքը: Իսկ էվերեթի հրապարակներից մեկն այսօր կոչվում է նրա անունով...

Իսկ մեզ համար կարևոր է, որ մեր հայրենակից Ալ Վեգան անմասն չի եղել հայ կյանքից: Այսպես, 1956-ին Բոսթոնում նա նվագել է ի նպաստ Պոլսի Սուրբ Փրկիչ Ազգային հիվանդանոցի կազմակերպված երեկույթին, 1991-ին ամերիկյան թատրոնի և կինոյի հայազգի կատակերգուհի Անդրեա Մարթինի հետ միասին մասնակցել է Հայ կանանց միջազգային ընկերակցության միջոցառումներից մեկին և այլն...

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Պատմում են, որ Պագանինին մահացել է լուսնյակ մի գիշեր՝ ջութակը ձեռքին: Նշանավոր Ջենովացին հազիվ է ավարտել մեղեդին, և հանկարծ աղեղն անշարժացել է մատներում:

Քանի որ նրան մեղադրում էին եկեղեցու հանդեպ անհավատարմության մեջ (նա մահացել էր՝ հրաժարվելով հաղորդությունից), եկեղեցին արգելեց նրա աճյունը թաղել Ջենովայում: Թվում է մանրուք, սակայն դա պատճառ դարձավ, որ տասնյակ տարիներ երաժշտի մարմինը դեգերի Եվրոպայով մեկ:

Սենյակից, որտեղ նա մահացել էր, աճյունը տեղափոխել էին նկուղ, այնտեղից՝ լազարեթ, բայց այստեղ երկար չէին պահել: Սնապաշտ մարդիկ պնդում էին, որ տեսել են ոչ միայն մահացածի մարմնի լուսավորվելը, այլև լսել ջութակի կախարդական մեղեդին: Այս պատմությունը շատ երկարեց, քանի որ Հռոմը ևս հրաժարվեց Իտալիայում հուղարկավորելու թույլտվություն տալուց, և որդին հարկադրված էր հոր դիակը տեղից տեղ տեղափոխել:

Ջութակահարի մահից 53 տարի անց, երբ դագաղը բացվեց նրա թոռան ներկայությամբ, որպեսզի հուղարկավորեն Պարմի գերեզմանատանը, բոլորն ապշեցին՝ տեսնելով մահացածի հրաշալի պահպանված դեմքը, բայց արդեն ամբողջովին քայքայված մարմինը:

* * *

ԱՄՆ-ում մի վարորդ հնավաճառից հինգ դոլարով գնում է մի նկար: Տարիներ անց արդեն թոշակառու դարձած վարորդի ավտոտնակում այդ կտավը նկատել է տեղի համալսարանի պրոֆեսորներից մեկը:

Փորձագիտությունը պարզել է, որ նկարի հեղինակը XX դարի ամերիկյան խոշորագույն նկարիչ Ջեքսոն Պոլլոքն է, որի «N 5, 1948» կտավը մասնավոր գործարքի շրջանակներում վաճառվում է 140 միլիոն դոլարով: Արդյունքում յոթանասունչորսամյա թոշակառուն հսկայական կարողության տեր է դառնում:

* * *

Զարմանալի արվեստագետ էր Մինաս Ավետիսյանը. նրա ո՛չ կյանքը, ո՛չ արվեստը նման չէին որևէ մեկի կյանքին ու արվեստին:

Նկարչի տանը ցուցադրված էր «Խաչելություն» կտավը, և շատերը գալիս էին, երկար դիտում այն, հեռանում: Օրեր անց նկարիչը արվեստաբան Ռուբեն Զարյանին հանդիպելիս պատմել էր, որ այցելուների մեջ հիսունն անց մի կին նկարին բավական երկար նայելուց հետո մոտեցել էր իրեն ու ասել.

- Անշուշտ, նկարիչը Դուք եք, ես միանգամից ճանաչեցի, որ



Դուք եք խաչվածը, բայց իզուր եք նկարել. երկար չեք ապրի և կմեռնեք ոչ Ձեր մահով:

1975-ի փետրվարն էր. մայթի վրա ելած մարդատարը վրաերթի էր ենթարկել նկարչին, և նրա վիճակն անհույս էր: Գուցե ճակատագրի հեգնա՞նքն էր, թե՞ զուգադիպություն, բայց այդ օրերին վաճառքի հանվեց նկարչի ստեղծագործությունների շքեղ ալբոմը, ու մարդիկ զարմացան՝ տեսնելով վերջին նկարը, որ կոչվում էր «Հրաժեշտ»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր»-ը հայտարարում է «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականների խրախուսման մրցույթ»

Մրցույթի նպատակներն են խրախուսել գիտության բոլոր բնագավառներով միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերում հոդվածների տպագրությունը, խրախուսել հայագիտության և հումանիտար գիտությունների, հասարակական գիտությունների բնագավառներով անգլիալեզու տպագրությունը, նպաստել ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:

Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով ու մասնագիտություններով, անցկացվում է երեք ենթածրագրով՝

● առաջին՝ «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում դասակարգման ավելի բարձր քառորդում առաջին անգամ տպագրության համար դրամաշնորհի տրամադրում: Մրցույթին ներկայացված հոդվածի քառորդը ընտրվում է տվյալ ամսագրի բոլոր կատեգորիաների քառորդներից ամենաբարձրը՝ համաձայն 2023 թվականի տվյալների: Նախկինում տպագրված հոդվածների դեպքում ընտրվում է տպագրության տարվա առավելագույն քառորդը,

● երկրորդ՝ «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում, ըստ տվյալ կատեգորիայի ամսագրերի դասակարգման, առաջին (Q1) քառորդի առաջին հինգ ամսագրերում տպագրած հոդվածի համար դրամաշնորհի տրամադրում,

● երրորդ՝ հայագիտության և հումանիտար գիտությունների, հասարակական գիտությունների բնագավառներով (Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ցանկի 5-րդ և 6-րդ բաժիններում ընդգրկված մասնագիտություններով) «Scimago Journal & Country Ranking (SJR)» պորտալի առնվազն Q4 քառորդում ընդգրկված ամսագրերում տպագրված գիտական հոդվածների համար դրամաշնորհի տրամադրում:

Յուրաքանչյուր գիտական հոդված մրցույթին կարող է ներկայացվել մեկ անգամ: Ներկայացվող գիտական հոդվածը պետք է հրապարակված և հասանելի լինի առցանց կամ տպագիր տարբերակով: Գիտական աշխատանքի հրապարակման (publication date) կամ առցանց հասանելի դառնալու (available online) ամսաթիվը պետք է լինի 2023 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 15-ը ներառյալ:

Հայտատուն մրցույթին կարող է ներկայացնել մեկ գիտական հոդված: Առաջին և երկրորդ ենթածրագրերին ներկայացված գիտական հոդվածը պետք է տպագրված լինի ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ) ունեցող ամսագրերում: Հայտատուի կազմակերպությունը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում, և այդ կազմակերպությունը պետք է նշված լինի տպագրված հոդվածում որպես հեղինակի պատկանելության (affiliation) վայր:

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» հայտարարում է «Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում մրցույթ»

Մրցույթի հիմնական նպատակներն են աջակցել երիտասարդ գիտնականների մասնագիտական որակավորման բարձրացմանը, երիտասարդ գիտնականների համար հասանելի դարձնել արտասահմանյան առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստվելու հնարավորությունը, նպաստել ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:

Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով, երեք ենթածրագրերով՝

● առաջին՝ արտասահմանյան գիտական կենտրոններում երիտասարդ գիտնականների վերապատրաստման համար ֆինանսավորման տրամադրում,

● երկրորդ՝ արտասահմանյան գիտական կենտրոններում գիտական ստորաբաժանումների երիտասարդ ղեկավարների (բաժնի, լաբորատորիայի կամ գիտական խմբի ղեկավար) մասնագիտական վերապատրաստման և հմտությունների (այդ թվում՝ կառավարման հմտությունների) կատարելագործման համար ֆինանսավորման տրամադրում,

● երրորդ՝ արտասահմանյան կազմակերպություններում ժամանակակից սարքեր-սարքավորումների վրա աշխատելու հմտությունների կատարելագործման համար ֆինանսավորման տրամադրում:

Վերապատրաստման տևողությունը կարող է լինել 30-ից մինչև 90 օր առաջին ենթածրագրի դեպքում, 10-ից մինչև 90 օր՝ երկրորդ և երրորդ ենթածրագրերի դեպքում:

Վերապատրաստման մեկնարկի օրը կարող է լինել 2024 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2025 թ. օգոստոսի 1-ը ներառյալ:

Ընդունող կազմակերպություն կարող է հանդիսանալ արտերկրի գիտական կազմակերպությունը (բուհը), ինչպես նաև հետազոտական բաղադրիչ ունեցող ձեռնարկությունը, որտեղ հայտատուն պատրաստվում է իրականացնել վերապատրաստումը: Հայտատուն ընդունող կազմակերպությունում պետք է ունենա հրավիրող/մենթոր, ով պետք է ունենա գիտական աստիճան կամ համարժեք որակավորում:

Հայտատուն պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի կամ ՀՀ-ում մշտապես բնակվող և գիտահետազոտական աշխատանք կատարող երիտասարդ գիտնական:

Մրցույթին դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի հուլիսի 31-ն է: Արդյունքները նախատեսվում է ամփոփել մինչև 2024 թվականի հոկտեմբերի 1-ը:

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» հայտարարում է «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթ»

Մրցույթի նպատակներն են նպաստել երիտասարդ գիտնականների կողմից հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում մրցունակ և նորարարական հետազոտությունների կատարմանը, խթանել որակյալ անգլիալեզու հոդվածների պատրաստումն ու հրատարակումը:



Դրամաշնորհներ են տրվելու 2-3 երիտասարդ գիտնականներից բաղկացած խմբերին: Հետազոտությունը պետք է իրականացնել 12 ամսվա ընթացքում: Հետազոտության ավարտին խումբը պետք է ունենա միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)», կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)» պորտալում՝ առնվազն Q4 քառորդում) ընդգրկված ամսագրերից մեկին ուղարկված (submitted) անգլիալեզու գիտական հոդված, որն առնվազն պետք է ընդունված լինի խմբագրի կողմից և ներկայացված առաջին գրախոսականին (review):

Երկու հոգուց բաղկացած խմբերի ֆինանսավորման առավելագույն չափը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, իսկ երեք հոգուց բաղկացած խմբերինը՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Խումբը կարող է ունենալ արտասահմանյան խորհրդատու, ով պետք է լինի օտարերկրյա գիտահետազոտական կազմակերպությունում աշխատող և գիտական աստիճան ունեցող գիտնական, և նրա Հիրշի ինդեքսը (h-index), ըստ «Scopus» շտեմարանի տվյալների, պետք է լինի առնվազն 3:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2024 թվականի օգոստոսի 10-ը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 22.07.2024 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: